ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026թ. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

23. 01 2026թ.

ՎՁՄ Եղեգիս համայնք

Ժողովի մասնակիցներ՝

1. Ահարոն Գաբրիելյան- հանձնաժողովի նախագահ
2. Սամվել Մարտիրոսյան- հանձնաժողովի նախագահի տեղակալ
3. Աննա Դանիելյան- հանձնաժողովի քարտուղար
4. Մուրադ Օհանյան- հանձնաժողովի անդամ
5. Բաբիկ Օհանյան- հանձնաժողովի անդամ
6. Հրանտ Վանյան- հանձնաժողովի անդամ
7. Սիլվա Խորենյան- հանձնաժողովի անդամ
8. Գարեգին Եղյան- հանձնաժողովի անդամ
9. Ռուբեն Հովհաննիսյան- հանձնաժողովի անդամ
10. Վանուհի Սաֆարյան- հանձնաժողովի անդամ

Օրակարգ՝

Եղեգիս համայնքում 2026 թ. մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում ներկայացված առաջարկների՝ չափորոշիչներին համապատասխանության գնահատում:

Լսեցին՝

1. Հանձնաժողովի նախագահ Ահարոն Գաբրիելյանին

Նա արձանագրեց մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցի համաձայն առաջարկների ներկայացման փուլի ավարտը:

2. Հանձնաժողովի քարտուղար Աննա Դանիելյանին

Նա ներկայացրեց հունվարի 15-ից հունվարի 21-ն ընկած ժամանակահատվածում ներկայացված առաջարկները, մասնավորապես՝

հ/հ	Առաջարկի անվանումը	Հեղինակը
1	Քարագլուխ բնակավայրում ճանապարհի բետոնե հենապատի կառուցում	Արայիկ Աառքելյան
2	Քարագլուխ բնակավայրում ոռոգման առվի բետոնե հենապատի կառուցում	Մարինե Զաքարյան
3	Արտաբույնք բնակավայրում մանկական խաղահրապարակի համալրում և փոքրիկ զբոսայգու ստեղծում	Տիգրան Կարապետյան
4	Վոլեյբոլի բացօթյա դաշտի կառուցում	Հրանտ Ղազարյան
5	Խմելու ջրի ակունքների ցանկապատում	Լուսինե Մինասյան
6	Գերեզմանոցի ցանկապատում	Նունե Դավթյան
7	Ոռոգման առվի բետոնե հենապատի կառուցում	Նաիրա Հունանյան
8	Գյուղի կենտրոնի բարեկարգում	Գեղամ Պողոսյան
9	Գյուղի մուտքի ցուցանակի կառուցում	Լուսինե Հակոբյան
10	Երիտասարդական կենտրոնի ստեղծում	Արսեն Ստեփանյան
	Մշակույթի տան վերանորոգում	Գևորգ Մաթևոսյան

Առաջարկներ-նախագծերը քննարկվեցին համաձայն ՀՀ Կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի <<ՀՀ համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը>> հաստատելու մասին թիվ 1890-Ն որոշման: Քննարկման արդյունքում ընտրվեցին սահմանված չափանիշներին համապատասխանող առաջարկները, ինչպես նաև նույնաբովանդակ առաջարկները միավորվեցին իրար հետ:

Հաշվի առնելով վերոգրյալները՝

<u>Հանձնաժողովը որոշեց՝</u>

Եղեգիս համայնքի պաշտոնական կայք-էջում քվեարկության ներկայացնել հետևյալ առաջարկները՝

- Երիտասարդական կենտրոնի ստեղծում Աղնջաձոր բնակավայրում, մշակույթի տան վերանորոգում Թառաթումբ բնակավայրում,
- Արտաբույնք բնակավայրում խաղահրապարակի համալրում և փոքրիկ զբոսայգու ստեղծում,

- Բետոնե հենապատերի կառուցում Քարագլուխ և Շատին բնակավայրերում,
- Վոլեյբոլի բացօթյա դաշտի կառուցում Հորս բնակավայրում ,
- Գերեզմանատան ցանկապատում Սալլի բնակավայրում ,
- Ակնաղբյուրի ցանկապատում Վարդահովիտ բնակավայրում ,

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ահարոն Գաբրիելյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Աննա Դանիելյան